վանքի ներկա շինությունը վերջավորված է ՉՀ (=1321) թվին, վոր յեղնդավոր տառերով յերևում է շինության հարավային պատի ճակատին։ Վանքը գտնվում է բերդից, վոր այժմ Պռոշի բերդ է կոչվում, քիչ դեպի հյուսիս-արևմուտք Թեաքադեոնդյուրան սարի հարավային փեշերին, մի սքանչելի բարձրավանդակի վերա, շրջապատված վայրի վարդենիների թփերով, վորի համար և մահմեդականների կողմից Գյուլվանք կոչված։ Վանքից քիչ հեռու զանգակատունն է, կամարակապ մի փոքրիկ շենք, արտասովոր մեր զանգակատան շենքերի համեմատությամբ, վորի կիսեղծ և դժվարընթեռնելի արձանագրությունը, տարաբաղդաբար, կորցրել ենք։ Յեկեղեցու շինության և նախնական պատմության աղբյուրները արձանագրություններն են։

Քիչ վերև արդեն հիշեցինք, թե յեկեղեցին շինված և կամ ավելի ճիշտ վերջավորված է 1321 թվին. մենք հիշեցինք նաև Եաչիի արձանագրության մասին, վոր կրում է ՉՀԱ (1322) թվականը (պատկ. 80), մինչդեռ նա մեռած եր արդեն ՉԿԷ (1318) թվի նավասարդից առաջ։ Այս անախրոնիզմը բացատրել կարելի յե միայն նրանով, վոր շենքն սկսված է հոր կենդանության ժամանակ, բայց վերջավորված է մի քանի տարի հետո՝ վորդու ժամանակ, վորին ապացույց կարող է լինել և այն հանգամանքը, վոր վանքի հյուսիսային պատի վերա քանդակված է Եաչիի և Ամիր-Հասան Բ.-ի պատկերները իբրև վանքի հիմնադիրների, վոր մինչև այժմ սխալմամբ Պռոշի և նորա Ամիր-Հասան Ա. վորդունն է համարվել։ Այս մասին քիչ հետո։ Վանքի շինությունը, ուրեմն, տևել է մոտավորապես 4—5 տարի, վոր անհասկանալի յե իսկապես այսպիսի մի փոքր շենքի համար*։

Եաչիի արձանագրությունը հետաքրքրական և վոչ միայն հնագրական տեսակետով, յուր բազմաթիվ, նախկին դարերի համար անսովոր ձևի կցումներով վոր շատ դժվարացնում է ընթերցումը, այլ և նվիրված Տանձի հողի չորս սահմանների վորոշումով, ժողովրդական բառերով և արտահայտություններով։ Այդ դժվարությունն է յեղել պատճառը, վոր Զալալյան, Բաջքերունի, նրանց հետևող Ալիշան և ապա Սիսով կամ չեն հիշատակում այդ արձանագրությունը կամ շատ թերի և արտառոց ընթերցում են տալիս։ Բարեբաղդաբար Լալայանցի և մեր լուսանկարներով ամբողջացած են այս և բոլոր կարևոր արձանագրությունները, վորով հնարավորություն է տրվում բանասերներին վերստուգության յենթարկելու նրանց ընթերցումը։ Արձանագրությունը գրված է Պարոն Ամիր-Հասանի վորդի Եաչիի կողմից, վորով հայտնում է, թե նորակնունք, այսինքն նոր ոծված սուրբ Աստվածածին և սուրբ Կարապետ յեկեղեցուն, Գրիգոր ճգնավորի հայրության ժամանակ «վախմ» է տալիս Տանձի հողը «հանդ» ու սահման? յուր չորս «հատոցն», այն է վերի ու ներքին ճանապարհով, յերկու ձորամիջով, Բարարտոյ? ձորն գանձհանի առով, ներքի ջրախառով ու բերդի ձորով։ Միարանները վորոշում են չորս պատարագ Աստվածածնի փոխման տոնին։ «Հակառակար»-ին Հուդայի և Կայենի բաժինն է սպառնում։ Նորակնունք բառը արձանագրության մեջ ցույց է տալիս, վոր գրված է Եաչիի մահվանից և շենքի վերջավորությունից հետո, ինչպես հաստատում է արձանագրության վերջում գրված թվականը «թվ. ՉՀԱ»։ Դժվար է, ի հարկե, այժմ ճշդիվ վորոշել, թե վորո՞նք են «վերի» և «ներքի» ճանապարհները, բայց դոցանից մեկը, հավանորեն, այն ճանապարհն է, վոր Բաշքյանդ գյուղից Պռոշա կապ կոչված ժայռերի տակով (Բարար? ձոր) անցնում է դեպի վանքի բանձրավանդակի արևմտյան ստորոտը, ուր խառնվում են հյուսիսից և հարավից յեկող յերկու վտակները (Ջրախառը), բարձրավանդակին մի տեսակ սուր թերակղզու ձև տալով։ Հարավային վտակի հյուսիսային ճյուղն է, վոր հոսում է բերդի ձորով, վորի աղբյուրները բղխում են կարծեցյալ Գլաձորի մոտերքից։ «Գանձհանի առը» պիտի լինի վանքի բարձրավանդակի արևմտյան ձորը, վոր ձգվում է հարավից դեպի հյուսիս՝ Թեաքադեոնդյուրանի լանջերը. այդ բարձրավանդակը, հիրավի, պղնձի հանքեր ունի և վանքի մոտից բղխող աղբյուրից փայլուն, մետաղի ավազ է դուրս գալիս։ Արձանագրությունը պատմական մի վկայություն է մի ժամանակ բանուկ հանքերի համար։

Ամիր-Հասան Բ.-ն ել ունի յուր արձանագրությունները. դոցանից մեկն անթվական է և գրված է 1340 թվականից վոչ ուշ, յերբ նորա կինը առանձին արձանագրությամբ յուր հոգու բաժինն է տալիս վանքին։ Արձանագրության համեմատ «Ամիր-Հասանի որդի Լաչո» և «Բորա գոտ (դուստր) Զաքարաի» հայտնում են, թե Խստորալեզում իրենց հայրենի Նախազարեանց? Զահենենց այդին և Դավթենց այդեսեղի կեսը տալիս են «սբ անապատիս եւ Գրիգորի գերեզմանիս» հիշատակ՝ հայր Մկրտչի ձեռքով՝ իրենց և իրենց նախնյաց համար։ Վանահայրը յուր միարանների հետ տարին չորս պատարագ և սահմանում Ավագ

---

* Հավանորեն այս հապազման պատճառը յերկրի խառնակ վիճակն եր, վորի մասին մեզ գաղափար է տալիս Հովհաննես գրչի հիշատակարանը, նկարագրելով հատկապես Գեղարքունիքի վիճակը. «յարեաւ ոմն անաւրէն Ղուռումչի, որ պատերազմեցաւ ընդ պարոն Զաւպանի և արար փախստական», յերկիրը, յեկեղեցիները, գրքերն ու ապառները կողոպտվում են, գերիներ տանում յերեխաներին և ծերերին. «ընակութի աշխարհիս թողին զինչս իւրեանց և ի ծերպս վիմաց ապաւինէին... իբրև զնուէ (s!) էրէրէր էրկիր ի յահէ անիծեալ Ղուռումչոյ, մինչև քաղցրացաւ ած և առաքեաց զԲուսախտ խանն և կոտորեաց զղուռումչի և զաւրան իւր. և եղև խաղաղութի ամ աշխարհի և դարձաւ աշխարհս ի ընակութի իւր... և Զաւպանն կրկին հաստատեցաւ ի պարոնութի Բուսախտղանի»։ (Ձեռ. № 88, Յերևանի թանգարանում)։ Ժամանակը թվագրված է «ՉԿԹ։ և ի։ ՉԿԸ։ (=1319—1320)»։ Այս դեպքերն ակնարկում է և մի անհայտ ժամանակագիր «Երընչի և Ղուռումչին նոտան». (Սամուէլ Անեցի շարունակություն. Վաղարշապատ. 1893. 167։